



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍԱՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ՏՕՒ Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ
31 ՄԱՐՏ 2024

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԳԻՐՔԷՆ (1.15-26)

Համբարձումէն քանի մը օրեր ետք, երբ շուրջ հարիւր քսան հաւատացեալներ մէկտեղուած էին, Պետրոս ոտքի ելլելով ըսաւ.

« Եղբայրներ, պէտք էր կատարուէր Սուրբ Գիրքին մէջ գրուածը, այն ինչ որ նախօրօք Սուրբ Հոգին ըսած էր Դաւիթի բերնով՝ Յուդայի մասին, որ Յիսուսը ձերբակալողներուն առաջնորդողը եղաւ: Յուդա մեր խումբէն էր, մեզի պէս առաքելական ծառայութեան համար ընտրուած: Բայց իր անիրաւ մատնութենէն ետք, որուն վարձքով ագարակ մը գնեց, երեսնիվայր ինկաւ այնտեղ եւ փորը ճեղքուելով՝ փորոտիքը դուրս թափեցաւ: Բոլոր Երուսաղէմացիները այս մասին իմացան, եւ այդ պատճառով այդ ագարակը իրենց բարբառով “ակեղղամա”, այսինքն՝ “Արեան ագարակ” կը կոչեն: Արդ, Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է. “Թող անոր տունը աւերակ մնայ, եւ մարդ հոն չբնակի” իսկ ուրիշ տեղ մը կ’ըսէ. “Իր պաշտօնը ուրիշ

մը թող առնէ”: Այստեղ կան մարդիկ որոնք միշտ մեր հետը եղած են Տէր Յիսուսի երկրաւոր առաքելութեան ամբողջ տեւողութեան, Յովհաննէսի ձեռքով անոր մկրտութենէն մինչեւ երկինք համբարձման օրը: Ասոնցմէ մէկը պէտք է տասնըմէկիս միանայ՝ Քրիստոսի յարութեան վկայ ըլլալու համար»:

Այն ատեն հաւատացեալները երկու հոգի ներկայացուցին. Բարսաբա կոչուած Յովսէփը, որ արդար մականուանուեցաւ, եւ Մատաթիան: Ապա հետեւեալ աղօթքը ըրին. « Դուն, Տէ՛ր, որ կը ճանչնաս բոլոր մարդոց սիրտերը, ցո՛յց տուր մեզի թէ այս երկուքէն ո՞ր մէկը կ’ընտրես առաքելական այս պաշտօնին համար, որմէ Յուդա ինկաւ՝ ինքն իր ճամբան երթալու համար»:

Ապա երկու անուններուն վրայ վիճակ ձգեցին: Վիճակը Մատաթիային ելաւ, եւ անիկա տասնըմէկ առաքեալներուն կարգին դասուեցաւ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

(16.1-8)

Շաբաթ օրը երբ անցաւ,
Մարիամ Մագլթաղենացին,
Մարիամ՝ Յակոբի մայրը եւ
Սողոմէն գացին խուկեր գնեցին
եւ պատրաստեցին,
որպէսզի երթան եւ
օծեն Յիսուսի մարմինը:
Կիրակի առաւօտ
կանուխ, արեւածագին, գերեզման
եկան: «Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի
մուտքին դուռը», կը հարցնէին
իրարու, որովհետեւ քարը շատ մեծ
էր: Սակայն երբ նայեցան, տեսան
որ քարը արդէն իսկ գլորուած էր:
Գերեզմանէն ներս մտան եւ ձերմակ
զգեստ հագած երիտասարդ մը

... հոս չէ,
յարութիւն
առաւ:

տեսան, որ աջ կողմը նստած էր:
Սարսափեցան: Երիտասարդը ըսաւ
անոնց. «Մի՛ վախնաք, գիտեմ որ
խաչուած Նազովրեցի Յիսուսը կը
փնտռէք. բայց հոս չէ, յարութիւն
առաւ: Տեսէ՛ք, զինք հոս դրած էին:
Այժմ գացէք, ըսէք իր աշակերտներուն
եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ
առաջ կ'երթայ Գալիլիա. հոն պիտի
տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր
ձեզի»:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան
գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար,
ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ
կը վախնային:



ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ:

ՊՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ: